ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ հոկտեմբերի 2 N 181 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի ԹԻՎ 164-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017թ օգոստոսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Շենկանի հիմնական դպրոց>>, <<Նորոշենի Ռ. Հարությունյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Վարդենուտի միջնակարգ դպրոց>>, <<Չքնաղի հիմնական դպրոց>>, <<Ռյա-Թազայի Ա. Ավդալի անվան միջնակարգ դպրոց>>, <<Միջնատան հիմնական դպրոց>>, <<Վարդենիսի Զ. Հակոբյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Լեռնապարի միջնակարգ դպրոց>>, <<Հնաբերդի միջնակարգ դպրոց>>, <<Մելիքգյուղի միջնակարգ դպրոց>>, <<Լուսագյուղի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում ներքին աուդիտ անցկացնելու մասին>> թիվ 164-Ա կարգադրության վերնագրում և տեքստում լրացնել <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություն բառերով և մասնակից դարձնել առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ Սիլվա Թադևոսյանին, անձնակազմի կառավարման բաժնի առաջատար մասնագետ Հերմինե Ղափանցյանին և ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ Գոռ Եգորյանին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 4 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2017 թվականի հոկտեմբերի 2-ից ավարտել 2017 թվականի հոկտեմբերի 5-ին:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ